# Տեղական Լուրեր

## ՍԱՐՍԱՓԱԶԴՈՒ ԵՐԿՈՒ ԳՈՂԵՐ
### եւ Սուրիական ոստիկանութիւնը

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

Ամբողջ գողօնները գտնուելէ եւ առնուելէ ետք ոստիկանները Քոնարին կը հարցնեն թէ ո՞ւր են ոսկեղէնները։ Քոնարի առաջնորդութեամբ ոստիկաններ կը գտնեն նաեւ Սաաթ անուն Քիլլոնի կնոջ տունը, զոր յիշած ենք մեր պատմութեան սկիզբը։ Սաաթ ո՛չ միայն գիտէր Քոնարին եւ Գէորգին ո՞վ ըլլալը, այլ նաեւ կը կատարէր անոնց գաղտնի պահանջները։ Հետեւաբար Սաաթին բնակարանը եւ ամբողջ բակը խուզարկելէ ետք գողօնի ոստիկանները երեւան կը հանեն բոլոր այն զարդերը եւ իրերը որոնց միջոցաւ հալեցուցած էին ոսկեղէնները։

Ապա մասնաւոր ուշադրութեամբ տեղեկագիր մը կը պատրաստեն եւ հետախոյզ խմբակը կը վերադառնայ Հալէպ, իրեն հետ բերելով գրաւեալ եւ գտնուած բոլոր իրերը։

Հետապնդող երկու ոստիկանները երբ Հալէպ հասան, անմիջապէս ներկայացան իրենց պետին եւ ներկայացուցին պատրաստուած տեղեկագիրն ու վերադարձուած իրերը։ Ոստիկանութիւնը անհրաժեշտ օրինականութիւնները գործադրելէ ետք, բոլոր գողօնները վերադարձուց իրենց բնական տէրերուն։

### ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Բոլոր հարցաքննութիւններէն յետոյ պաշտօնապէս հաստատուեցան գողութիւնները եւ գտնուեցան գործադրողները։ Քոնարը եւ Գէորգ բանտ առաջնորդուեցան։

Վերջնական եզրակացութենէն ետք, փաստաթուղթերու լոյսին տակ, յիշեալ երկու գողերուն հետ բանտարկուեցան նաեւ կարգ մը անձեր, որոնք գործակիցներ եւ ձուլ ոսկի գնած էին գողերէն։

(Նար. 14 և վերջ)

ԳՐԻ ԱՌԱՐ ԹՂԹԱԿԻՑ Ժ. ՎԷՐ

## ԴԷՊԻ ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԱ

ԴԱՄԱՍԿՈՍ .— Տնտեսական շրջանակներու համաձայն, սուրիական բամպակին ներկայ արտադրութիւնը լաւ տեսակէտով առաջին կարգի վրայ դրուած կ'ուղղուի դէպի Ֆրանսա եւ Լիբանան։ Գինը 85 էն 97 ի միջեւ համաձայն բամպակի որակին։ Լիբանանեան հիւսուածեղէնի գործարանատէրեր սկսած պահանջելու իրենց գործարաններուն սուրիական բամպակով օգտուելով գիներու յարմարութենէն եւ լիբանանեան բերքերու ունեցած առաւելութենէն։

Վերջերս երկիրներէն գաս, Իտալիա եւս ներկայացուցած է կարեւոր քանակութեամբ բամպակ ներածելու պահանջքը Սուրիայէն։

Միւս կողմէ Ղամիշլի շրջանին բամպակը առատ բերք մը ունեցաւ եւ հողը առաջ եր տարուին մեծ ցանքերով։

Նոյնպէս կը յայտնուի թէ Ջազիրէի ներկայ բերքը ... Ամերիկայի ձէթին գինը 190—170 ղրուշ ծախուեցաւ եւ քրտական ձէթը 175—185 ղրուշ։

Այս տարուան կ'ըմանանք որ թէյի ձէթը ... Սուրիա կը բերուի, որովհետեւ Թուրքիոյ մէջ ձէթը սուղ է։

## Յայտարարութիւն

Յառաջիկայ Կիրակի, Նոյեմբեր 15 ին Երուսաղէմի դպրեվանքի Տեսուչ՝ Գեր. Տ. Հայկազուն Վրդ. Պայրամեան պիտի պատարագէ եւ քարոզէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ։ Բարեպաշտ ժողովուրդը սիրով կը հրաւիրուի։

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ
ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱԼԷՊ, 11/ 11/ 53


ՆՈՐ ԳԻՒՂ ՆՈՐ ԳԻՒՂ

Թարմ եւ ընտիր սուրճ կը ծախուի
ՊՐ. ԳԵՂԱՄ ՓՐՉԻԿԵԱՆԻ
ԽԱՆՈՒԹԸ
ՄՐՃԱՐԱՆ ՍԱՀԱԿԻ ՔԻՉ ՎԵՐԸ
ՄԵԾԱՔԱՆԱԿ ԳՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱՒՈՐ ԶԵՂՉ


## Նուազուրդ

Հալէպի ջուրի և ելեկտրականութեան հաստատութիւնը կը յայտարարէ, թէ նուազուրդով կը ծախէ։

Տախտակէ սնտուկներ, վիրաւորուած գերաններ, տախտակէ պարապ տակառներ, առաստաղի փայտ, տախտակէ (պաքարաններ), ... երկաթի կտորներ, վիրաւորուած ... երկաթի կտորներ, երկաթէ պարապ տակառներ։

Նուազուրդը տեղի կ'ունենայ Շաբաթ 13 Նոյեմբեր 1953, կէսօրէ ետք ժամը 3ին, հաստատութեան դիմացը գտնուող հրապարակին վրայ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆ


## Տիէքրիխ



Փոքր և հանքածուխի ֆրանսական արդիական վառարաններ, որոնք համբաւաւոր են իրենց խնայողութեամբ, շատ դիւրամատչելի գիներով կը վաճառուին։

ՌՈՒԼԱՆ ՏԱՎԱԹԻ վաճառատունը,
Ազիզիէ, Հայ. Ազգ. նոր շէնքին մէջ, Հեռաձայն թիւ 14268


## Սինեմա Հալէպ

Երկուշաբթի 16 Նոյեմբերէն սկսեալ, մեծ հպարտութեամբ կը կը ցուցադրէ ժապաւէն մը, ուր իւրաքանչիւր քրիստոնեայ պարտի տեսնել զայն Նոր տարուան մեծագոյն դէպքերէն մին կը նկատուի։



### Ֆաթիմայի հրաշքը

Այս ֆիլմին համար ամէն օր առաւօտեան ժամը 10ին բացառիկ ցուցադրութիւն։





ԱՊԱՀՈՎԵՑԷՔ
ՁԵՐ ԴԱՍԱԳԻՐՔԵՐԸ, ՏԵՏՐԱԿՆԵՐԸ ԵՒ ԱՅԼ
ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՅՔՆԵՐԸ
ԳՐԱՎԱՃԱՌ — ԹՂԹԱՎԱՃԱՌ
Վահան Տարագճեանէն
ՀՐՇԷՋՆԵՐՈՒ ՓՈՂՈՑԱՅ, ՀԱԼԷՊ
ՀԵՌԱՁԱՅՆ 14928
ՑԻՇԵԱԼ ԳՐԱՏՈՒՆ ՄԷՋ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ ԸՆՏԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ
Մատչելի Գին



ՃԱՔԻՐ—ԱՍՏՂԱԳԷՏ
ՄԱՍՆԱԳԷՏ ՔՆԱՑՆՈՂ ԵՒ ՈԳԵՀԱՐՑ
Պելլեւիւ Պողոտայ, Կարաժ Խաուռամ
Հեռաձայնի թիւ 12271


## ՍԱԿԱՐԱՆ

ԹՂԹԱԴՐԱՄ

| | |
|---|---|
| Տոլար | 356 |
| Ոսկերլին | 940 |
| Ֆրանսական 1000 Ֆրանք | 902 |
| Զուիցերիական Ֆրանք | 82,00 |
| Պելճիքական Ֆրանք | 6,50 |
| Եգիպտական | 850 |
| Յորդանանեան | 910 |
| Տինար | 970 |
| Թրքական | 65 00 |
| Լիբանանեան | 109,50 |

ՈՍԿԵԴՐԱՄ

| | |
|---|---|
| Անգլիական | 34,00 |
| Օսմ. Թիւնարի | 27,30 |
| Օսմ. Րեշատի | 31,50 |


ՕԳՆԵՑԷ՛Ք
ԱԶԳ. ԾԵՐԱՆՈՑ
ԱՆԿԵԼԱՆՈՑԻՆ